



Իրավունքների Պաշտպանություն  
Առանց Սահմանների ՀԿ



NATIONAL  
ENDOWMENT  
FOR  
DEMOCRACY

SUPPORTING FREEDOM AROUND THE WORLD

# ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## Դատախազների գործունեության գնահատումը

Ուսումնասիրության ունը կատարվել է «Իրավունքների պաշտպանության ուն առանց «Ղափարակյան բարեփոխումների իբանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ժողովրդավարության և Ձաղագսման Ազգային Հիմնադրամի օժանդակությամբ: Դրանում սեղ գտած սեռականությունը և վերլուծությունները պատահաբար սում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել ժողովրդավարության և Ձաղագսման ազգային հիմնադրամի սեռականության և դիրքորոշումների հետ:

Ուսումնասիրության և հեղինակն է Հասմիկ Հարությունյան:  
Խմբագիր՝ Կարապետ Երևանյան

Իրավունքների պաշտպանության ուն առանց սահմանների ՀԿ  
ք. Երևան, Ալիբյան 11, բն. 24, ՀՀ  
Հեռ. : 010 505303  
Էլ. փոստ [info@prwb.am](mailto:info@prwb.am)  
<https://prwb.am/>

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՁԵՎԱԿՈՐԿԱԾ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ .....	5
Առանձին երկրներում գնահատման առանձնահատկությունները .....	8
ՏՀԶԿ երկրներում տեղեկությունների հավաքագրման հաստատված փորձերը .....	14
Դատախազության կատարողականի խթանիչները .....	14
ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....	18
Արտահերթ ատեստավորում.....	19
Ատեստավորման անցկացումը.....	20
Ատեստավորման արդյունքները.....	22
Բողոքարկման հնարավորություն .....	24
ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ .....	25
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	27

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին շրջանում արդարադատության որակի բարձրացման համատեքստում միջազգային կազմակերպությունների ուշադրությանն է սկսել արժանանալ դատախազության կատարողականի արդյունավետության բարձրացումը, ինչը ազդում է նաև դատական համակարգի նկատմամբ հանրության վստահության վրա<sup>1</sup>: Նման մոտեցմամբ հանրային ոլորտի պետական մարմինների կատարողականի գնահատումը թույլ է տալիս վեր հանել տվյալ մարմնի նպատակներն ու դրանց ուղղությամբ անհատական ու կոլեկտիվ գործառույթների բարելավման ուղղությունները:

Ինչպես ցանկացած այլ մարմնի, այնպես էլ դատախազության համակարգի և դատախազների գործունեության անհատական գնահատումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի չխաթարվի համակարգի և դատախազների անկախությունը ու այն չվերածվի անհարկի միջամտության գործիքի: Այդ նպատակով կարևոր է ունենալ ձևավորված օբյեկտիվ և թափանցիկ չափանիշներ, որոնք կդրվեն գնահատման հիմքում և գործընթացը կկազմակերպվի այնպես, որ բացառվի քաղաքական միջամտություններն ու ազդեցությունը:

Սույն ուսումնասիրությամբ անդրադարձ կկատարվի դատախազների գնահատման առնչությամբ ձևավորված մոտեցումներին, նպատակին ու առանձին երկրներում արդեն ներդրված համակարգին: Չուգահեռաբար կներկայացվեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գնահատման համակարգը ու դրա համապատասխանելիությունը ձևավորված մոտեցումներին, առկա բացերն ու համակարգի կատարելագործման ուղղությունները:

---

<sup>1</sup> Ivan-Cucu, V. (2015), Evaluating prosecutors' performance: celebrating success and censuring failure, <https://www.iap-association.org/getattachment/Conferences/Annual-Conferences/Annual-Conference-2014/Tuesday-25-November-2015/Virgil.pdf.aspx>.

## ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՁԵՎԱԿՈՐԿԱԾ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի (հետայսու՝ ԵԴԽԽ) համաձայն դատախազների գնահատման նպատակը վերջիններիս հմտությունների ու աշխատունակության զարգացման ուսումնասիրումն է, ինչպես նաև առաջխաղացումը, որոշ պետություններում խրախուսումը և պարզապահությունները կամ ընդհանուր առմամբ վարքագծի կանոնների և այլ խախտումները կանխելը՝ կարգապահական տույժերից խուսափելու համար: ԵԴԽԽ-ն ընդունել է նաև, որ դատախազների կատարողականի գնահատումը պետք է իրականացվի կանոնավոր, լինի ողջամիտ և դրա հիմքում պետք է դրվեն վերաբերելի ու օբյեկտիվ չափանիշներ: Դատախազները պետք է հասանելիություն ունենան գնահատման արդյունքներին և հնարավորություն ունենան վիճարկել արդյունքները<sup>2</sup>: Ինչ վերաբերում է գնահատման չափանիշներին, ապա դրանց շուրջ նույնպես ձևավորվել են ընդհանուր մոտեցումներ: ԵԴԽԽ-ի մեկ այլ կարծիքով ընդունվել է, որ դատախազների ատեստավորման ընթացքում կիրառվում են որակական մի շարք չափանիշներ, ինչպիսիք են՝ հարուցված և դադարեցված հետապնդումների թիվը, որոշումների տեսակները (գործով ելքերը), դատախազական վարույթների տևողությունը, գործերի կառավարման հմտությունները, բանավոր և գրավոր խոսքի՝ հստակ փաստարկման կարողությունը, նոր տեխնոլոգիաներին բաց լինելը, կազմակերպչական ունակությունները, դատախազության ներսում և դրանից դուրս մարդկանց հետ համագործակցելու կարողությունը<sup>3</sup>:

ԵԴԽԽ-ն առաջարկում է նաև, որպեսզի դատախազների գնահատումը լինի թափանցիկ ու կանխատեսելի՝ պարզ և նախապես հրապարակված չափանիշների հիման վրա՝ թե՛ նյութական և թե՛ դատավարական կանոնների տեսակետից: Թափանցիկ ու կանխատեսելի գնահատումը նշանակում է, որ գնահատման ենթարկվող դատախազը պետք է ի վիճակի լինի քննարկելու իր գնահատման արդյունքները կամ, ըստ անհրաժեշտության, համեմատել իր ինքնագնահատումը վերադաս դատախազի կամ այլ իրավասու անձի կողմից կատարված գնահատման հետ: Գնահատման արդյունքները չպետք է հրապարակվեն այնպես, որպեսզի որևէ կերպ վնասեն գնահատման ենթարկված դատախազի անձնական բարեվարքությունը կամ արատավորեն նրա պատիվը<sup>4</sup>:

Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ (հետայսու՝ ՏՀԶԿ) գնահատումը, որպես գործիք, նպատակ է հետապնդում բարձրացնել դատախազների կատարողականի որակն ու արդյունավետությունը և

<sup>2</sup>Consultative Council of European Prosecutors, Opinion No 9 on European norms and principles concerning prosecutors, 2014, available at <https://rm.coe.int/168074738b>

<sup>3</sup> Consultative Council of European Prosecutors, Opinion No 11 on the quality and efficiency of the work of prosecutors, including when fighting terrorism and serious and organized crime 2016, available at <https://rm.coe.int/16807474b9>

<sup>4</sup> Նույն տեղում, կետ 44-46:

նպաստել մասնագիտական զարգացմանը: Դատախազների կատարողականի գնահատումը երբեմն կապվում է նաև նրանց առաջխաղացման և աշխատավարձերի բարձրացման հետ<sup>5</sup>:

Կարևոր է, սակայն, ապահովել, որ գնահատումը չվերածվի դատախազների անկախության միջամտության գործիքի: Դրա համար կատարողականի գնահատումը, պահանջում է նախ հատուկ ցուցիչների և չափանիշների կիրառություն, որոնք պետք է լինեն օբյեկտիվ և թափանցիկ:

ՏՀԶԿ-ն նույնպես որպես ընդհանուր մոտեցում ընդունել է, որ գնահատման գործընթացում կարևոր է ուշադրություն դարձնել գնահատման չափանիշներին, որոնց նպատակն է օբյեկտիվորեն գնահատել դատախազների կատարողականը: Որպես նախնական տեղեկատվության հավաքագրման միջոց խորհուրդ է տրվում օգտագործել քանակական չափանիշներ, սակայն վերջիններս չպետք է վճռորոշ դեր ունենան գնահատման գործընթացում և պետք է օգտագործվի նաև ստացված տվյալների վերլուծությունը: Միայն քանակական տվյալների օգտագործումը կարող է հանգեցնել չարաշահումների և/կամ անհիմն եզրահանգումների դատախազների համար բացասական հետևանքներով: Կարևոր է նաև, որ քանակական չափանիշներով հավաքված տվյալները մանրամասն նկարագրվեն, որպեսզի գնահատումը լինի հավաստի:

Գնահատման հավաստի և արդյունավետ համակարգ ձևավորելու համար խորհուրդ է տրվում առավելապես օգտագործել որակական չափանիշներ և որակական գնահատում: Չնայած դա ավելի ժամանակատար և աշխատատար է, սակայն արդյունքները առավել վստահելի են: Գնահատման ընթացքում չպետք է սուկ որոշվի գործերի քանակը, հաղթած և պարտված վարույթների թիվը, այլ գնահատումը պետք է ուսումնասիրի նաև գործը պարտվելու պատճառները, արդյոք հնարավոր էր այն շահել, արդյոք պարտվելը պայմանավորված է եղել դատախազի գործունեությամբ և այլն:

Գնահատման կազմակերպման տեսանկյունից կարևորվում է նաև գործընթացում ունենալ մարմին, որը կլինի անկախ, օրինակ Դատախազական խորհուրդը կամ դրա առանձին ստորաբաժանում կամ անկախ տեսչություն (ինսպեկտորատ): Պարտադիր է ունենալ նաև գնահատման արդյունքների բողոքները քննող մարմին:

Միավորված ազգերի կազմակերպության Իրավունքի գերակայության ցուցիչները խմբավորված են ըստ երեք մարմինների՝ ոստիկանություն, դատական համակարգ և քրեակատարողական հիմնարկներ<sup>6</sup>: Դատախազության համակարգը դիտարկվում է դատական համակարգի մեջ: Վերջինիս գնահատման ցուցանիշները դասակարգվել են ըստ որոշակի խմբավորումների, որին համապատասխանում են

<sup>5</sup> The Independence of prosecutors in Eastern Europe, Central Asia and Asia Pacific, 2020, Evaluation, <https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/resources-for-the-anti-corruption-network-for-eastern-europe-and-central-asia.htm>

<sup>6</sup> The United Nations Rule of Law Indicators: Implementation Guide and Project Tools, [https://reliefweb.int/report/world/united-nations-rule-law-indicators-implementation-guide-and-project-tools?gad\\_source=1&qclid=CjwKCAiA44OtBhAOEiwAj4gpOZwI2FgdIVMvmrplseJgspWvw52xEzkOHVY-C3MyPf85LXOrQlZNhoCxtQQAvD\\_BwE](https://reliefweb.int/report/world/united-nations-rule-law-indicators-implementation-guide-and-project-tools?gad_source=1&qclid=CjwKCAiA44OtBhAOEiwAj4gpOZwI2FgdIVMvmrplseJgspWvw52xEzkOHVY-C3MyPf85LXOrQlZNhoCxtQQAvD_BwE)

Նաև դատախազության հիմնական գործառնությունները: Երկրները, որոնք ընդունել են դատախազության կատարողականի/գործունեության կանոնավոր գնահատման ցուցիչներ, շատ չեն, սակայն գործող պրակտիկայի մեջ այդ ցուցիչները բաժանվում են քանակականի և որակականի<sup>7</sup>: Դրանք են՝

- Յուրաքանչյուր դատախազի գործերի միջին քանակը,
- Մեկ դատախազի հաշվով բողոքարկված գործերի միջին քանակը,
- Յուրաքանչյուր դատախազի կողմից մեկ տարում ավարտված գործերի քանակը,
- Կասեցված գործերի քանակը,
- Դատարան ուղարկված գործերի քանակը,
- Մեղադրական վճռով ավարտված գործերի քանակը,
- Արդարացման վճռով ավարտված գործերի քանակը,
- Զրեական դատավարության ֆորմալ ընթացակարգով չքննված գործերի քանակը,
- Մեկ տարվա ընթացքում մեկ գործի միջին արժեքը:

Դատախազության կատարողականը գնահատվում է նաև՝

- Հանրային վստահությամբ և թե արդյոք հանրությունը հավատում է դատական իշխանության արդյունավետությանն ու արդարությանը,
- Անկախությամբ և բարեվարքությամբ, հաշվի է առնվում նաև այն, թե դատախազները արդյոք թույլ են տալիս մարդու իրավունքների խախտումներ ու չարաշահումներ և թե արդյոք ազատ են մասնավոր կամ քաղաքական ճնշումներից:
- Թափանցիկությամբ և հաշվետվողականությամբ, հաշվի առնելով արդյոք որոշումների կայացման և գործառնությունների վերաբերյալ տեղեկությունը հասանելի է, թե ոչ և այլն:
- Հանրության հասանելիություն դատավարություններին,
- Դատախազների կողմից թույլ տրված խախտումների քննությունը,
- Դատախազության կատարողականի մշտադիտարկման համակարգի առկայություն:

Գնահատման ենթարկվում են նաև դատախազության համակարգի կարողությունները: Վերջիններս գնահատվում են հետևյալ գործոնների առկայությամբ և օգտագործմամբ՝

- Նյութական ռեսուրսներ. արդյո՞ք ծառայությունը ունի անհրաժեշտ ենթակառուցվածքներ, գույք և այլն;
- Մարդկային ռեսուրսներ. արդյո՞ք դատախազությունն ունի բավարար արժանիքահեն ընտրված անձնակազմ, որը բավարար վարձատրություն է ստանում:

<sup>7</sup> OECD Library, Performance of the Prosecution Services in Latvia: a Comparative study, <https://www.oecd-ilibrary.org/sites/6ce28942-en/index.html?itemId=/content/component/6ce28942-en>

## Առանձին երկրներում գնահատման առանձնահատկությունները

**Լատվիայում** յուրաքանչյուր դատախազի անհատական գնահատումը իրականացվում է յուրաքանչյուր հինգ տարին առնվազն մեկ անգամ: Գնահատումն իրականացվում է Դատախազների ատեստավորման հանձնաժողովի կողմից, որը դատախազների ինքնակառավարման մարմին է: Հանձնաժողովը դատախազի գործունեության վերաբերյալ տրամադրում է դրական կամ բացասական կարծիք, սակայն այդ կարծիքը պարտադիր հետևանք կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ հաստատվում է Գլխավոր դատախազի կողմից: Եթե որևէ դատախազի գնահատումը կրկնվող բացասական արդյունք է ստանում, տվյալ դատախազը պետք է պաշտոնից ազատվի: Դատախազը հնարավորություն ունի բողոքարկելու ատեստավորման հանձնաժողովի կարծիքը, ինչպես նաև դատական կարգով վիճարկել լիազորությունների դադարեցումը:

Լատվիայում գնահատման գործընթացում հավաքագրվում է երկու տեսակի վերաբերելի տեղեկատվություն: Նախ, դատախազությունը յուրաքանչյուր տարի իր գործունեության մասին զեկույց է ներկայացնում Խորհրդարանին, ինչը համակարգի և վերջինիս հատկացված ռեսուրսների մասին բավականաչափ տեղեկատվություն է տալիս: Օրենսդրությունը չի սահմանում Խորհրդարան ներկայացվող զեկույցի հստակ բովանդակություն, սակայն պրակտիկան ցույց է տվել, որ զեկույցը պարունակում է քննված գործերի տեսակի և քանակի մասին տվյալներ, գործերի կուտակումները, դատախազների անհատական գնահատման միջինացված տվյալներ, օգտագործված միջոցների և ստացված արդյունքների մասին տվյալներ, վերապատրաստումները, հանցագործությունների ընդհանուր վիճակագրությունը, առանձին ոլորտներում դատախազների կատարողականի վերլուծությունը:

Ավելին, ի հավելումն տարեկան զեկույցի, դատախազության առանձին բաժիններին վերաբերելի ցուցիչներն ու դրանց հիման վրա հավաքված տվյալները ներառվում են ընթացիկ զեկույցներում, ինչը թույլ է տալիս գնահատել դատախազների արդյունավետությունը: Վերջինս իրականացվում է դատախազների անհատական գնահատման համար՝ առանձին չափանիշների հիման վրա, որոնք սահմանվում են գլխավոր դատախազի կողմից:

Այնուհետև կազմվում է շրջանի դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի արդյունքների համեմատական աղյուսակը: Այս և անհատական գնահատման հիման վրա հավաքագրված բոլոր տվյալները և հաշվետվությունները ներկայացված են դատախազության տեղեկատվական համակարգում, ինչը թույլ է տալիս հսկայական տեղեկատվություն գեներացնել ընթացիկ գործերի մասին՝ բաժանված ըստ հոդվածների, բաժինների, ժամանակահատվածի, դատախազի և նստավայրի և այլն: Տեղեկատվության նման



հավաքագրումը թույլ է տալիս պատկերացում կազմել նաև առանձին դատախազների գործունեության մասին:

**Լատվիայի** շրջանային դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի արդյունքները ամփոփվում են չորս հիմնական բաժիններով՝

- **Տեղեկատվական բաժին**, ինչը տեղեկություն է պարունակում գործերի քանակի, դատարան փոխանցված գործերի քանակի, մեղավոր ճանաչված անձանց թվի և տվյալ տարում կատարված հանցանքների թվի և ընթացիկ գործերի քանակի մասին: Այս բաժնում գնահատումը միավոր չի ենթադրում:
- **Աշխատանքային ծանրաբեռնվածության բաժին**, ինչը պարունակում է դատարան հանձնված քրեական գործերի, հանցագործությունների, մեղադրյալների և հատկապես ընթացիկ քրեական գործերի քանակը. բավարարված բողոքների թիվը, առաջին ատյանում քննված քրեական գործերի քանակը և դրանցում ժամանակի սպառումը, որոշ հատուկ ընթացակարգերի համաձայն քրեական պատասխանատվությունից ազատված անձանց թիվը: Այս բաժնում միայն դրական միավորներ են տրվում:
- **Կատարողականի բաժին**, ինչը պարունակում է արագացված ընթացակարգով, ինչպես նաև համաձայնություն կնքելու դեպքում դատարան փոխանցված քրեական գործերի քանակը, իրավաբանական անձի նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելու առաջարկով դատարան փոխանցված վարույթների քանակը, դատված քրեական գործերի թիվը, որոնցում ապացույցների ստուգում սահմանված կարգով չի իրականացվել, մինչդեռ տական վարույթում վերականգնված քրեական գործերով դատախազության արձանագրություններում պարունակվող ձերբակալվածների թիվը. թերությունների և խախտումների վերացման համար դատարանից ստացված քրեական գործերի քանակը և այլն: Այս բաժնում տրվում են ինչպես դրական, այնպես էլ բացասական միավորներ:
- **Ամփոփման բաժին**, ինչը պարունակում է բոլոր շրջանների տվյալների համեմատությունը՝ կապված աշխատանքային ծանրաբեռնվածության և կատարողականի գնահատման արդյունքների հետ:

Միավորների հաշվարկը կատարվում է՝ ըստ հատուկ մշակված ընթացակարգի: Օրինակ, 2 ամիսը գերազանցող քրեական գործի համար տրվում է 2 բացասական միավոր, համաձայնություն կնքելուց հետո դատարան փոխանցված յուրաքանչյուր քրեական գործի համար տրվում է 1 դրական միավոր, արագացված ընթացակարգով դատարան հանձնված յուրաքանչյուր քրեական գործի համար տրվում է 1 դրական միավոր:

Բացասական միավորներ են շնորհվում, երբ դատարանը հետ է ուղարկում գործը քննության փուլում առկա բացերի կամ խախտումների պատճառով:

Լատվիայում գործող գնահատման կարգի և խորհրդարան ներկայացվող տարեկան զեկույցի առնչությամբ ՏՀԶԿ կողմից խորհուրդ է տրվել տարեկան ամփոփման մեջ հավաքագրվող տվյալներում ներառել նաև որակական ցուցիչներ՝

- Գործերի կուտակում,
- Անձնակազմի արդյունավետությունը,
- Աշխատակազմի բավարարվածությունը,
- Օգտատերերի գոհունակությունը (դատարանների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ),
- Մեղադրյալների և տուժողների համար դատական ընթացակարգերի ծախսերը,
- Բողոքարկումների թիվը,
- Բողոքարկման հարաբերակցությունը,
- Գործերի ավարտելու տոկոսադրույքը,
- Զննության ժամանակը,
- Հանցավորության նվազման տենդենցները:

**Վրաստանում** գնահատման ենթարկվում է դատախազների իրավաբանական գրագրությունն ու գրագիտությունը, կատարողականը, ծանրաբեռնվածությունը, գործը վարելու ընթացքը: Գնահատումը իրականացվում է Գլխավոր դատախազության Դատախազական գործունեության և ռազմավարական զարգացման դեպարտամենտի կողմից: Գնահատման արդյունքները ներկայացվում են Գլխավոր դատախազության Մարդկային ռեսուրսների կառավարման և զարգացման բաժնին:

Ի լրումն գնահատման, տվյալ դատախազին վերահսկող դատախազը պատրաստում է նաև լրացուցիչ զեկույց, որը կրկին ներկայացվում է մարդկային ռեսուրսների կառավարման բաժնին: Ռազմավարական պլանավորման և դատախազական գործունեության վերահսկման բաժնիը ամենօրյա ռեժիմով ողջ տարվա կտրվածքով դիտարկում է դատախազների աշխատանքն ու կարողությունները և արդյունքները կրկին ներկայացնում մարդկային ռեսուրսների կառավարման բաժնին: Հավաքվող տեղեկատվության մեջ տեղ են գտնում տվյալներ դատախազի վերապատրաստումներին մասնակցության մասին, հանցագործությունների կանխմանն ուղղված աշխատանքների և կարգապահական վարույթների մասին:

Հավաքված տվյալների հիման վրա Ռազմավարական պլանավորման և դատախազական գործունեության վերահսկման բաժնիը տալիս է վերջնական

գնահատումը, ինչը դատախազի կողմից հնարավոր է վիճարկել Կարիերայի կառավարման, Էթիկայի և վարույթների խորհրդի առջև<sup>8</sup>:

**Մոլորվայում** դատախազների գնահատումը նախատեսված է Դատախազության մասին օրենքով: Գործընթացը իրականացվում է Դատախազների ընտրության և գնահատման կոլեգիայի կողմից, որը ենթակա է Դատախազների բարձրագույն խորհրդին: Գնահատման նպատակն է գնահատել դատախազների գործունեությունը, գիտելիքների և մասնագիտական կարողությունների գնահատումը, դրանց համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին, ինչպես նաև կատարելագործել մասնագիտական պատրաստվածությունը և բարձրացնել դատախազների գործունեության արդյունավետությունը<sup>9</sup>:

Դատախազների ընտրության և գնահատման կոլեգիայի կողմից գնահատումը կատարվում է երկու ընթացակարգով՝ կանոնավոր (պարբերական) և արտահերթ: Դատախազները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անցնում են կանոնավոր գնահատում, իսկ արտահերթ գնահատումը իրականացվում է դատախազի դիմումի հիման վրա, բայց ոչ ավելի հաճախ, քան երկու տարին մեկ անգամ, մրցույթի մասնակցելիս կամ այն դեպքում, երբ կանոնավոր գնահատման դեպքում ստացել է անբավարար եզրակացություն:

Գնահատման արդյունքում գնահատման խորհուրդը ընդունում է հետևյալ եզրակացություններից մեկը՝ «անբավարար», «լավ», «շատ լավ» կամ «հիանալի» կամ ընդունում է, որ դատախազը չի անցել/ տապալել է գնահատումը: Վերջնական եզրակացության մեջ Կոլեգիան տալիս է գնահատականը, դրա սահմանումը /մեկնաբանությունը և համապատասխան առաջարկներ, որոնց առնչությամբ դատախազը պետք է աշխատի և բարելավի կատարողականը: Անբավարար գնահատական ստացած դատախազն անցնում է արտահերթ գնահատում ոչ շուտ, քան վեց ամիս անց, սակայն ոչ ուշ, քան մեկ տարին: Երկու անընդմեջ «անբավարար» գնահատական ստանալու կամ գնահատման տապալման դեպքում դատախազն ազատվում է զբաղեցրած պաշտոնից<sup>10</sup>:

Գնահատման չափանիշներն ու ընթացակարգը սահմանում է Դատախազների բարձրագույն խորհուրդը: Սահմանված չափանիշները պետք է լինեն չափելի, կոնկրետ և վերաբերելի դատախազության գործառույթներին:

**Ռումինիայում** դատախազները գնահատվում են հաշվի առնելով վերջիններիս աշխատանքի որակն ու աշխատանքի արդյունավետությունը, բարեվարքությունն ու վերապատրաստումների մասնակցությունը: Առավել բարձր և առաջատար պաշտոնների պարագայում գնահատման ենթակա է նաև կառավարման կարողությունները: Գնահատման ընթացակարգը նախատեսված է Դատավորների և

<sup>8</sup> Դատախազության մասին Վրաստանի օրենք (Organic Law of Georgia on the Prosecutor's Office), հասանելի է <https://matsne.gov.ge/en/document/view/4382740?publication=2>  
<sup>9</sup> Դատախազության մասին Մոլորվայի օրենք (Law on the Public Prosecution Service), [https://www.legis.md/cautare/getResults?doc\\_id=133648&lang=ru](https://www.legis.md/cautare/getResults?doc_id=133648&lang=ru)  
<sup>10</sup> Դատախազության մասին Մոլորվայի օրենք, հոդված 31:

դատախազների մասնագիտական աշխատանքի գնահատման կարգով ընդունված Դատավորների Բարձրագույն Խորհրդի կողմից<sup>11</sup>: Գնահատումը ինքնին իրականացվում է Գնահատման հանձնաժողովների կողմից, որոնք ձևավորվում են Դատավորների Բարձրագույն Խորհրդի կողմից: Հանձնաժողովները բաղկացած են Դատավորների Բարձրագույն Խորհրդի դատախազական բաժնի երկու դատախազներից և այդ բաժնի ղեկավարից: Խորհուրդը յուրաքանչյուր դատախազի մասով առանձին տեղեկատվական թերթիկ է պատրաստում, ինչը պարունակում է ինչպես տվյալ դատախազի աշխատանքի ու արդյունավետության մասին վիճակագրական տվյալներ, դատախազի ինքնագնահատականը և Խորհրդի պատրաստած գնահատման զեկույցը: Չեկույցով դատախազի աշխատանքը գնահատվում է «շատ լավ», «լավ», «բավարար» կամ «անբավարար»:

Ըստ անհրաժեշտության Խորհրդի կողմից հնարավոր է դատախազի հետ անցկացվի նաև հարցազրույց:

Մինչ վերջնական որոշում կայացնելը գնահատվող դատախազը կարող է դիտարկել իր վերաբերյալ կազմված զեկույցը, ներկայացնել իր մեկնաբանությունները, ինչից հետո նոր Խորհուրդը այն վերջնականացնում է:

Այն դեպքում, երբ դատախազը համաձայն չէ կայացված վերջնական որոշման հետ, ապա կարող է եզրակացությունը բողոքարկել Դատավորների Բարձրագույն Խորհրդի դատախազական բաժնի առջև:

**Սերբիայում** դատախազների գնահատման գործընթացում առանձնակի ուշադրություն է դարձվում գնահատման չափանիշներին:

Չափանիշները սահմանված են Դատախազության և դատախազների աշխատանքի գնահատման չափանիշների կանոնակարգով<sup>12</sup>: Կանոնագիրքը սահմանում է աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշները, ինչը ներառում է ստացված և քննված գործերի քանակը, վերջնական մեղադրական եզրակացությամբ ավարտված գործերի քանակը, դատախազների պրոֆեսիոնալիզմն ու համագործակցության ծավալները:

Առանձին ստորաբաժանումների ղեկավարների և առաջատար պաշտոնների համար գնահատվում է նաև կառավարման ու վերահսկողության կարողությունը:

Ստորադաս դատախազները գնահատվում են տվյալ բաժնի ղեկավար դատախազի կողմից: Մինչ գնահատական տալը ղեկավարները ստանում են նաև Դատախազական կոլեգիումի կարծիքը համապատասխան դատախազի վերաբերյալ:

<sup>11</sup> Regulation on the Evaluation of the Professional Activity of Judges and Prosecutors, approved by Decision no. 676/04.10.2007 of the Superior Council of Magistracy.

<sup>12</sup> The Independence of prosecutors in Eastern Europe, Central Asia and Asia Pacific, 2020, Evaluation, <https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/resources-for-the-anti-corruption-network-for-eastern-europe-and-central-asia.htm>

Այստեղ նույնպես գործում է բողոքարկման մեխանիզմ: Այն դեպքում, երբ դատախազը համաձայն չէ կայացրած եզրակացության հետ, ապա կարող է արդյունքները բողոքարկել Դատախազական խորհրդին:

**Ուկրաինայում** դատախազների գնահատման ինստիտուտը դեռևս բարեփոխման փուլում է: Մինչև 2022 թ-ի փոփոխությունները Ուկրաինայում դատախազների գնահատումը իրականացվում էր վերահսկող դատախազների կողմից: Գնահատման նպատակներից մեկը ամսեկան բոնուսների որոշումն էր: Ընդհանուր նպատակը, սակայն, հանդիսացել է պաշտոնական պարտականությունների ժամանակին և որակյալ կատարումն ու կարգապահական նորմերի պահպանությանը հետևելը:

2023 թվականից երկրում գործում են գնահատման նոր մեխանիզմ և կարգավորումներ: Կարգավորումները սահմանված են Դատախազների աշխատանքի որակի գնահատման համակարգի կանոնագրքով: Ըստ նոր կարգավորման՝ գնահատման ենթակա են բոլոր դասային աստիճանների դատախազները, գնահատման արդյունքների հիման վրա կրկին հնարավոր է դատախազին բոնուսային հավելավճար տրամադրել:

Գնահատման ընթացքում հաշվի է առնվում դատախազի կատարողականը, գործառույթների կատարման կառավարումը, մասնագիտական առաջխաղացմանը նպաստող միջոցառումներին մասնակցությունը, ստացած մրցանակները, կարգապահական վարույթների առկայությունը և բացակայությունը և այլն: Գնահատումն իրականացվում է տարեկան կտրվածքով և վեր է հանում տարեկան ցուցաբերած աշխատանքի որակը (ինչին հատկացվում է գնահատման 80%-ը) և աշխատանքի բարելավման ուղղությունները (20%), որը հնարավոր է իրականացնել մասնագիտական վերապատրաստումների միջոցով:

Գնահատման գործընթացը ներառում է դատախազի կողմից ինքնագնահատումը, ինչը հետո քննարկվում և հաստատվում է անմիջական վերադաս դատախազի կողմից և ներկայացվում ավագ մենեջերի ուշադրությանը: Այս գործընթացին ներգրավված է նաև Մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը: Կայացած որոշումը/ վերջնական եզրակացությունը հնարավոր է վիճարկել Դատախազության Կոմիսիայի առջև:

Ուկրաինայում ներդրված համակարգի առնչությամբ ԳՐԵԿՈ-ն առաջարկել է նշված գործընթացին մասնակից դարձնել դատախազության համակարգի ինքնակառավարման մարմնի նույնպես: Ինչպես նաև առավել արդյունավետ դարձնել բողոքարկման մեխանիզմը<sup>13</sup>:

---

<sup>13</sup>GRECO, Fourth Evaluation Round, Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors, Interim compliance report Ukraine, 2023, <https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680aaa790>

## ՏՀԿ երկրներում տեղեկությունների հավաքագրման հաստատված փորձերը<sup>14</sup>

Նոր Չեխանդիայում կիրառվում է Ղատախազության հանրային հաշվետվողականության պրակտիկան: Տեղեկատվությունը հավաքվում է ամսեկան կտրվածքով՝ ըստ առանձին գործերի: Տարեկան կտրվածքով հավաքագրվում է դատախազական գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների, ընդհանուր գործունեության և կառուցվածքի մասին տեղեկություններ: Հաշվետվողականության գործընթացին մաս կազմում են ինչպես դատախազական առանձին բաժինները, այնպես էլ դատախազները, ինչը պատկերացում է տալիս ինչպես ընթացիկ գործունեության, այնպես էլ ապագայի մասին:

Պորտուգալիայում ներդրված են վիճակագրական ցուցիչներ, որոնցով գնահատվում է դատախազների կատարողականի որակն ու քանակը: Զրեական հետապնդմանը վերաբերող ցուցիչները սահմանված են առանձին, օրինակ՝ հարուցված գործերի քանակը կոնկրետ ժամանակահատվածի համար, փակված գործերի քանակը, դրանցից՝ մեղադրանքով ավարտված և արդարացված գործերի քանակը: Այն գործերը, որոնցով քննությունը 8 ամսից ավել է տևում, առանձին մանրամասն գնահատման են ենթարկվում:

Շվեդիայում ներդրված է դատախարական ոլորտի մարմինների կատարողականի գնահատման տեղեկատվական համակարգ, ինչը ներառում է 10-ից ավելի մարմիններ: Այդ մարմինները գնահատվում են՝ ըստ հաստատված տարեկան բյուջեի և գնահատման ներդրված ցուցիչների: Ուղղակիորեն դատախազությանը և հանցավորությանը վերաբերող ցուցիչները հետևյալն են՝

- հանցավորության դեպքերի քանակը, որոնք հանգեցրել են քրեական հետապնդման,
- կասկածյալների թիվը, ովքեր ներգրավվել են վարույթին,
- դատախազների կողմից գործի քննության ժամանակը:

## Ղատախազության կատարողականի խթանիչները

Չնայած այն հանգամանքին, որ դեռևս գնահատման լավագույն փորձ որպես այդպիսին չկա, կան երկրներ, որտեղ ներդրվել են արդյունավետ մեխանիզմներ<sup>15</sup>:

<sup>14</sup> OECD, Performance of the Prosecution Services in Latvia: A Comparative Study, <https://www.oecd-ilibrary.org/sites/6ce28942-en/index.html?itemId=/content/component/6ce28942-en>

<sup>15</sup> The Independence of prosecutors in Eastern Europe, Central Asia and Asia Pacific, 2020, Evaluation, <https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/resources-for-the-anti-corruption-network-for-eastern-europe-and-central-asia.htm>

Տնտեսական համագործակցության և անվտանգության կազմակերպության (հետայսու՝ ՏՀԶԿ) անդամ երկրներում և հատկապես Լատվիայի փորձի հիման վրա առանձնացված են 6 հիմնական խթանիչներ<sup>16</sup>, որոնք միտված են համակարգի արդյունավետության բարձրացմանը: Այդ խթանիչներն են՝

- Ռազմավարական նպատակների և խնդիրների սահմանում,
- Որակի կառավարման համակարգի զարգացում,
- Դատախազների մասնագիտացում և վերապատրաստում,
- Ստանդարտացում և պարզեցում,
- Առանձին դատախազների համար բնուսային համակարգի կիրառում կախված աշխատանքի արդյունքներից,
- Առաջնահերթ միջոցառումների սահմանում:

Քրեական արդարադատության ռազմավարության մշակումը, ինչը կարող է ներառել ռազմավարական համապատասխան պլան և գործողությունների պլան՝ հստակ նպատակներով, առկա մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների հաշվի առմամբ, կարող է դատախազական համակարգի կատարողականի կատարելագործման առաջին խթանիչը հանդիսանալ: Նման ռազմավարական պլանավորման փորձ ունի Լատվիան:

Լատվիայում դատախազական համակարգի ռազմավարական պլանավորման ուղղությամբ ներդրված ջանքերը հանգեցրել են Դատախազության 2017-2021թթ Ռազմավարության ընդունմանը, որտեղ տեղ են գտել հետևյալ հիմնական նպատակները<sup>17</sup>

- Տնտեսական և ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարի հարցում դատախազության գործառնությունների արդյունավետ և որակյալ իրագործում,
- Դատախազության ներսում տեղեկատվական համակարգի զարգացում,
- Դատախազության ներսում ներքին իրավական ակտերի ընդունման գործընթացի բարելավում,
- Դատախազների և աշխատակիցների աշխատանքային միջավայրի բարելավում:

<sup>16</sup> Prosecution performance drivers, available at [4. Towards excellence in the Latvian prosecution system | Performance of the Prosecution Services in Latvia : A Comparative Study | OECD iLibrary \(oecd-ilibrary.org\)](#)

<sup>17</sup> Strategic planning for the prosecution <https://www.oecd-ilibrary.org/sites/6ce28942-en/index.html?itemId=/content/component/6ce28942-en#section-d1e6713>

Լատվիայում դատախազների աշխատանքի բարձր արդյունավետության ապահովման համար ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, որոնց մեջ կենտրոնական դեր ունեն՝

- Վերադաս դատախազի կողմից դատախազի աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ իրականացվող կանխարգելիչ մշտադիտարկում,
- Ավագ դատախազների կողմից դատախազության և առանձին դատախազների գործունեության պլանավորված ստուգում,
- Դատախազի կողմից կայացված որոշումների գնահատում,
- Դատախազի մասնագիտական գործունեության գնահատում<sup>18</sup>:

Դատախազների մասնագիտական գործունեության գնահատման կարևոր նախադրյալներից է օբյեկտիվ չափանիշների նախատեսումը:

Լատվիայում դատախազների աշխատանքի որակն ու արդյունավետությունը գնահատելու համար օգտագործվում են մի շարք չափանիշներ: Դրանց մեջ առավել կարևորներն են՝

- Օրենքի պահանջների պահպանումը, ներառյալ ընթացակարգային ժամկետների պահպանումը,
- Քանակական տվյալներ, ինչպիսիք են ավարտված գործերի քանակը, կայացված որոշումների քանակը, դատարանում գործերի քննության մասնակցություն և այլն,
- Գործերի բարդությունը, աշխատանքի արդյունքների որակը,
- Կայացված որոշումների որակը,
- Մասնագիտական կարողությունների դրսևորումը:

Ընդունված ռազմավարության և պլանավորման արդյունավետ կիրարկումը հասկանալու գործում կատարողականի գնահատումը կարևոր քայլ է: Ինչը կատարվում է երկու ուղղությամբ՝ նախ կատարողականի արձանագրման մեխանիզմների և ապա անհրաժեշտ վիճակագրական տվյալների և տեղեկատվության առկայություն:

ՏՀԶԿ անդամ երկրներում հիմնականում օգտագործվում է կատարողականի ներկայացում ինչպես քանակական, այնպես էլ որակական առումով:

---

<sup>18</sup> CCPE, Questionnaire for the preparation of the Opinion No. 11 of the CCPE: “Quality and efficiency of the work of prosecutors, including as regards the fight against organised crime and terrorism”, 2016, <https://rm.coe.int/consultative-council-of-european-prosecutors-ccpe-questionnaire-for-th/1680723571>



Յուրաքանչյուր դեպքում կարևոր է ունենալ հստակ ցուցիչներ, որոնց հիման վրա կիրականացվի կատարողականի գնահատումը: Նմանապես, կարևոր է ունենալ անհրաժեշտ տեղեկությունը հավաքելու պրակտիկ մեխանիզմներ, որը թույլ կտա ներդրված ցուցիչների ներքո իրականացնել գնահատումը: Խելամիտ կազմակերպման և տեղեկությունները օգտագործելու դեպքում՝ հավաքագրված վիճակագրական տվյալները, ընդունված ուղղություններն ու նպատակադրված խնդիրները կարող են խթանել դատախազական ողջ համակարգի կատարողականը:

Հարկ է առանձնակի ուշադրություն դարձնել հավաքագրված վիճակագրական տվյալների մեկնաբանությանը: Օրինակ, դատական գործը «կորցնելը կամ շահելը» չպետք է վճռորոշ գործոն հանդիսանա դատախազի կատարողականը գնահատելիս: Այս առումով գնահատումը պետք է հենվի տվյալների առավել մեծ ծավալի և դրանց գրագետ մեկնաբանության վրա:

## ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ԳԼԱՅԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանում դատախազների գործունեության գնահատումը իրականացվում է վերջիններիս ատեստավորման շրջանակներում և համար: Անհրաժեշտ կարգավորումները նախատեսված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 50-րդ հոդվածով: Օրենքի կարգավորումներից բխող լրացուցիչ կարգավորումները նախատեսված են ՀՀ Գլխավոր դատախազի 2018 թվականի՝ «Դատախազների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու ու ՀՀ Գլխավոր դատախազի 2007 թվականի օգոստոսի 1-ի N 54 և 2017 թ-ի սեպտեմբերի 25-ի N 87 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 44 հրամանով (հետայսու՝ Կարգ):<sup>19</sup>

*Ըստ օրենքի կարգավորումների՝ Դատախազների ատեստավորումն անցկացվում է զբաղեցրած պաշտոնին դատախազների մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման նպատակով:*

Դատախազները ատեստավորում անցնում են երեք տարին մեկ: Դատախազի պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձը անցնում է ատեստավորումը պաշտոնի նշանակվելուց երեք տարի հետո: Դատախազի արտահերթ ատեստավորումը կարող է անցկացվել հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո: Դատախազի արտահերթ ատեստավորումն անցկացվում է գլխավոր դատախազի հրամանով՝ իր պատճառաբանված որոշմամբ կամ դատախազի ցանկությամբ:

Օրենքը նախատեսում է նաև, որ ատեստավորման ենթակա դատախազները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:

Օրենքով նախատեսված են նաև ատեստավորման բացառություններ: Մասնավորապես, ատեստավորման ենթակա չեն՝

1) գլխավոր դատախազը և նրա տեղակալները.

2) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, Երևան քաղաքի դատախազը, զինվորական դատախազի տեղակալը, Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը, մարզի դատախազը, կայազորի զինվորական դատախազը, գլխավոր դատախազության ավագ դատախազը.

3) հղի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող դատախազները, եթե նրանք ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել:

Ինչ վերաբերում է ատեստավորման ընթացակարգին, ապա ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 1-ը ՀՀ Գլխավոր

<sup>19</sup> ՀՀ Գլխավոր դատախազի հրամանը N 44, Դատախազների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու ու ՀՀ Գլխավոր դատախազի 2007 թվականի օգոստոսի 1-ի N 54 և 2017 թ-ի սեպտեմբերի 25-ի N 87 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին, հասանելի է հետևյալ հղումով՝ [https://www.prosecutor.am/storage/orders/orders\\_20\\_1685023080.pdf](https://www.prosecutor.am/storage/orders/orders_20_1685023080.pdf)

դատախազի հաստատմանն է ներկայացնում հաջորդ տարում հերթական ատեստավորման ենթակա դատախազների ցուցակը, որը համապատասխան ժամանակացույցով հաստատվում է Գլխավոր դատախազի կողմից և ուղարկվում դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին ու դատախազություններին:

Ատեստավորման ենթակա յուրաքանչյուր դատախազ ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, տեղեկացվում է ատեստավորում անցկացնելու ժամանակի մասին՝ նրանից ստորագրություն վերցնելով: Իսկ ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական վերադաս դատախազը ներկայացնում է դատախազի գնահատագիրը:

Գնահատագիրը պետք է բովանդակի տվյալներ դատախազի մասին, նրա գործնական, անձնական հատկանիշների և պաշտոնական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում դատախազի կողմից իր կատարած աշխատանքների մասին տարին մեկ անգամ անմիջական վերադաս դատախազին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների վրա: Կարգը ի լրումն պահանջում է նաև, որ դատախազի աշխատանքի գնահատականը, նրա գործնական ու անձնական հատկությունների բնութագրումը լինի հստակ, հիմնավոր և օբյեկտիվ: Գնահատագրում նշվում են ինչպես դատախազի անձնական և մասնագիտական դրական հատկանիշները, այնպես էլ աշխատանքում և վարքագծում թույլ տված խախտումները, թերություններն ու բացթողումները: Անմիջական վերադաս դատախազի կողմից գնահատագրի չափանիշների անտեսումը կամ սահմանված կարգի խախտմամբ գնահատագիր ներկայացնելը համարվում է ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարում:

Հարկ է նշել, սակայն, որ չնայած Կարգով և օրենքով տրված է գնահատման շրջանակը, սակայն գնահատման չափանիշներ, որպես այդպիսին, նախատեսված չեն, ինչը թույլ է տալիս նշել, որ բացակայում է վերջնական եզրահանգման օբյեկտիվ պահանջները, դրա հաշվարկն ու որոշումների կայացման հիմնավորվածությունը:

Կարգով սահմանված են նաև դատախազի իրավունքները ատեստավորման գործընթացում: Ըստ այդմ՝ դատախազն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր գնահատագրին: Իր գնահատագրի վերաբերյալ դատախազը կարող է գրավոր անհամաձայնություն հայտնել անմիջական վերադաս դատախազին կամ վերադաս դատախազին, ինչպես նաև որակավորման հանձնաժողովին:

## Արտահերթ ատեստավորում

Ըստ օրենքի՝ արտահերթ ատեստավորում կարող է անցկացվել հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո՝ գլխավոր դատախազի հրամանով կամ դատախազի ցանկությամբ:

Դատախազը անմիջապես տեղեկացվում է դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի արտահերթ ատեստավորում անցկացնելու մասին: Ատեստավորման կոնկրետ ժամանակի մասին դատախազը տեղեկացվում է լրացուցիչ:

Արտահերթ ատեստավորում անցկացնելու հրամանը ստորագրվելուց կամ ատեստավորում անցնելու մասին դատախազի դիմումը գլխավոր դատախազի կողմից հանձնաժողովին մակագրվելուց հետո 5-օրյա ժամկետում դատախազի անմիջական վերադասը կազմում, դատախազին ծանոթացնում և Հանձնաժողովի նախագահին է ներկայացնում դատախազի գնահատագիրը:

## Ատեստավորման անցկացումը

Կարգը սահմանում է, որ ատեստավորումն անցկացնում է ՀՀ Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ օրենքին և կարգին համապատասխան:

Նախքան ատեստավորումը, Հանձնաժողովի նախագահը լուծում է Հանձնաժողովի իրավագրության հարցը՝ ստուգելով Հանձնաժողովի անդամների ներկայությունը, ստուգում է պահանջվող փաստաթղթերի, այդ թվում՝ գնահատագրերի առկայությունը, ինչպես նաև ատեստավորվողների ներկայությունը, որից հետո հայտարարվում է ատեստավորման անցկացման սկիզբը:

Դատախազը պետք է ներկա լինի ատեստավորմանը, անհարգելի պատճառով ատեստավորմանը չներկայանալը համարվում է ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարում:

Ըստ կարգի՝ ատեստավորումն իրականացվում է հարցազրույցի եղանակով: Վերջինս սկսվում է դատախազի վերաբերյալ փաստաթղթային տվյալները ստուգելով: Ինչից հետո դատախազի անմիջական վերադասը Հանձնաժողովին ներկայացնում է դատախազի գնահատագիրը:

Այն դեպքում, երբ փաստաթղթերի ստուգման փուլում հայտնաբերվում են փաստաթղթային տվյալների անհամապատասխանություն, կամ եթե առկա է զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու փաստ կամ փաստաթղթերը լիարժեք չեն, ապա որոշում է կայացվում հարցազրույցին մասնակցելու թույլտվություն չտալու մասին: Նման դեպքում ատեստավորումը հետաձգվում է մինչև հայտնաբերված բացերի կամ անհամապատասխանության վերանալը, բայց ոչ ավել, քան մեկ ամիս ժամկետով:

Խոսելով որակավորման հանձնաժողովի մասին, պետք է ուշադրություն դարձնել վերջինիս կազմի և ձևավորման առանձնահատկություններին և դրան առնչվող խնդիրներին: Մասնավորապես, ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի

դեպքում՝ տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և չորս իրավաբան-գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը<sup>20</sup>:

Ներպետական կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Որակավորման հանձնաժողովը առավելապես կազմված է դատախազներից: Ընդ որում, ինչպես վերջիններս, այնպես էլ նախատեսված իրավաբան-գիտնականները նշանակվում են գլխավոր դատախազի կողմից: Այսինքն, չնայած հանձնաժողովի առկայությանը, բոլոր որոշումների կայացման մեջ հիմնական դերակատարումը վերապահված է գլխավոր դատախազին և բոլոր որոշումները կայացվում են նրա կողմից: Օրենքը չի նախատեսում, թե ինչ սկզբունքով և ինչ չափանիշներով է իրականացվում դատախազ անդամների եւ իրավաբան-գիտնականների ընտրությունը, այն կրկին թողնված է գլխավոր դատախազի հայեցողությանն ու որոշմանը, ինչը թույլ է տալիս նշել նաեւ, որ հանձնաժողովի ձևավորման և գործունեության անկախության երաշխիքներ, ըստ էության, սահմանված չեն<sup>21</sup>: Այս առնչությամբ կրկին պետք է հղում կատարել ՏՀԶԿ-ին, որի Հայաստանի վերաբերյալ ընդունված զեկույցի համաձայն՝ «դատախազության կառավարման մարմին» նշանակում է դատախազության խորհուրդ կամ մեկ այլ մարմին, որը ստեղծվել է Սահմանադրությամբ կամ օրենքով, որը ինստիտուցիոնալ առումով անկախ է գործադիր և օրենսդիր իշխանությունից և պաշտոնապես չի ենթարկվում գլխավոր դատախազին և ունի մանդատ, որը սահմանված է օրենքով: Այս սահմանման մեջ «պաշտոնապես ենթակա չէ» նշանակում է, որ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները չեն նախագահում համապատասխան մարմինը, չեն նշանակում կամ ազատում նրա անդամներին, չեն հաստատում նրա որոշումները կամ որոշիչ դեր չեն խաղում դրա որոշումների կայացման գործում, ինչպես նաև իրավասություն չունեն վերահսկելու դրա գործունեությունը, իսկ «մանդատ» նշանակում է հատուկ առաջադրանքներ կատարելու լիազորություն<sup>22</sup>: Որակավորման հանձնաժողովը, ըստ այդմ, չի որակվում որպես դատախազական կառավարման մարմին այս սահմանումների համաձայն<sup>23</sup>:

<sup>20</sup> Դատախազության մասին ՀՀ օրենք, 23-րդ հոդված:

<sup>21</sup> ԻՊԱՍ, Դատախազության համակարգում պաշտոնի նշանակման կարգը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://prwb.am/2022/05/31/zekuyc-2/>

<sup>22</sup> OECD, Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-Corruption Reforms in Armenia, 2024, available at [https://www.oecd-ilibrary.org/governance/baseline-report-of-the-fifth-round-of-monitoring-of-anti-corruption-reforms-in-armenia\\_fb158bf9-en;jsessionid=u8ZQ2ChiGpNQI6UpDiKN4hSzBX0G\\_fmhA1VtR9SM.ip-10-240-5-125](https://www.oecd-ilibrary.org/governance/baseline-report-of-the-fifth-round-of-monitoring-of-anti-corruption-reforms-in-armenia_fb158bf9-en;jsessionid=u8ZQ2ChiGpNQI6UpDiKN4hSzBX0G_fmhA1VtR9SM.ip-10-240-5-125)

<sup>23</sup> Նույն տեղում:

Կարգը սահմանում է, որ հարցազրույցը դատախազի՝ զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված գործառույթներից բխող պարտականությունների իմացության և գործնական հմտությունների ստուգումն է՝ հարցաշարի հիման վրա տրված հարցերի միջոցով:

Հարցաշարը նախապես հրապարակվում է դատախազության կայքում՝ ատեստավորումից առնվազն մեկ ամիս առաջ<sup>24</sup>: Կարգը սահմանում է նաև, որ Հանձնաժողովի հարցադրումները պետք է ձևակերպվեն հստակ, հասկանալի և բովանդակային առումով նպատակաուղղված լինեն հարցաշարում ներառված հարցերի իմացությունը ստուգելուն:

Յուրաքանչյուր դատախազի հարցազրույց անց է կացվում առանձին: Յուրաքանչյուր անդամ դատախազին կարող է տալ առավելագույնը երկու հարց, հարցերի ընդհանուր քանակը պետք է լինի առնվազն վեց: Յուրաքանչյուր հարցից հետո հարց տվող Հանձնաժողովի անդամը հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ, մասնակի ճիշտ կամ մասնակի սխալ լինելը, իսկ սխալ կամ մասնակի սխալ պատասխանի դեպքում նշում է ճիշտ պատասխանը:

## Ատեստավորման արդյունքները

Որակավորման հանձնաժողովն ատեստավորման արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը<sup>25</sup>

- 1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.
- 2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ սույն օրենքով սահմանված կարգով ներառելով դատախազների ծառայողական առաջխաղացման համապատասխան ցուցակում.
- 3) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով.
- 4) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով արտահերթ դասային աստիճան շնորհելու մասին.
- 5) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով ավելի ցածր պաշտոնի փոխադրելու մասին.
- 6) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին:

Կարգը լրացուցիչ սահմանում է որոշում ընդունելու կարգը, համաձայն որի Հանձնաժողովը որոշումները կայացնում է բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված:

Որոշումը դատախազին հայտնվում է ատեստավորման ավարտից անմիջապես հետո:

<sup>24</sup> Դատախազների թեկնածությունների ցուցակը համարելու համար անցկացվող մրցույթի հարցաշար, <https://www.prosecutor.am/page/14>

<sup>25</sup> Դատախազության մասին ՀՀ օրենք, հոդված 50, 14-րդ մաս:

Օրենքով նախատեսված է նաև, որ Գլխավոր դատախազը որակավորման հանձնաժողովի՝ կայացված որոշման և ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան միջնորդությունները բավարարելու կամ մերժելու մասին որոշում է ընդունում ոչ ուշ, քան որակավորման հանձնաժողովի որոշումն ու ատեստավորման արդյունքներն ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ինչը նշանակում է, որ գլխավոր դատախազը այս առնչությամբ օժտված է լայն հայեցողությամբ:

Ըստ Կարգի՝ Հանձնաժողովի կայացրած որոշումները տեղադրվում են դատախազության պաշտոնական կայքէջում:

2023 թվականին իրականացված ատեստավորման արդյունքները կայքում ներկայացվել է ընդհանուր կարգով՝ ամփոփելով տարվա արդյունքները<sup>26</sup>:

Ըստ ամփոփման՝ կազմակերպվել է 18 հերթական ատեստավորում, որին ներկայացել է 98 դատախազ: Վերջիններիցս 63 դատախազ համապատասխանել է զբաղեցրած պաշտոնին, 10-ը համապատասխանել է զբաղեցրած պաշտոնին և ընդգրկվել ծառայողական առաջխաղացման ցուցակներում, 11-ը համապատասխանել է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով, 2-ը համապատասխանել է զբաղեցրած պաշտոնին և ՀՀ գլխավոր դատախազին միջնորդություն է ներկայացվել նրանց արտահերթ դասային աստիճան շնորհելու վերաբերյալ, 8-ը չի համապատասխանել զբաղեցրած պաշտոնին և ՀՀ գլխավոր դատախազին միջնորդություն է ներկայացվել նրանց ավելի ցածր պաշտոնի փոխադրելու վերաբերյալ, 4-ը չի համապատասխանել զբաղեցրած պաշտոնին և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով՝ նրանք ազատվել են զբաղեցրած պաշտոններից:

Առանձին և անհատականացված որոշումներ և տեղեկատվություն, սակայն, չի հրապարակվել, ինչը թույլ կտար հասկանալ որոշումների հիմքերն ու հիմնավորումները:

Նույն ժամանակահատվածի համար **Գլխավոր դատախազի 08.05.2023 թվականի N 189-Ա և 27.06.2023 թվականի N 272-Ա հրամանների համաձայն** իրականացվել է անցկացվել է 3 արտահերթ ատեստավորում, որոնց ներկայացել է 14 դատախազ: Ըստ արդյունքների՝ 7 դատախազ համապատասխանել է զբաղեցրած պաշտոնին, 3-ը համապատասխանել է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով, 1-ը չի համապատասխանել զբաղեցրած պաշտոնին և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով՝ փոխադրվել են ավելի ցածր պաշտոնի, 3-ը՝ չի համապատասխանել զբաղեցրած պաշտոնին և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով՝ ազատվել են զբաղեցրած պաշտոններից:

2023 թվականին անց է կացվել ևս 14 արտահերթ ատեստավորում, որին ներկայացել է 34 դատախազ: Մասնակցած 34 դատախազներից 33 դատախազ վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն՝ առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու համար, 1-ի վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն՝

---

<sup>26</sup> Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2023 թվականին անցկացրել է 15 միջույթ, 35՝ ատեստավորում. մասնակցել է 256 անձ, հասանելի է <https://www.prosecutor.am/article/4447>

առաջխաղացման ցուցակում ընդգրկելու համար<sup>27</sup>: Այլ տեղեկատվություն այս մասով  
ևս կրկին հասանելի չէ:

### Բողոքարկման հնարավորություն

Ըստ օրենքի՝ ատեստավորման արդյունքները հնարավոր է բողոքարկել գլխավոր դատախազին՝ որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում: Դատախազի կողմից ատեստավորման որոշման բողոքարկման դեպքում գլխավոր դատախազը որոշում է կայացնում բողոքը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ բողոքն ստանալու պահից հնգօրյա ժամկետում: Գլխավոր դատախազի կողմից բողոքը բավարարելու որոշում կայացվելու դեպքում դատախազն ատեստավորում է անցնում որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում: Գլխավոր դատախազի կողմից բողոքը մերժվելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

---

<sup>27</sup> Նույն տեղում:



## ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ

Դատախազների կատարողականի գնահատման նպատակը, ինչպես արդեն ներկայացվեց, վերջիններիս կատարողականի որակն ու արդյունավետությունը բարձրացնելն ու մասնագիտական զարգացմանը նպաստելն է: Այդ գործընթացում կարևոր նշանակություն ունեն կիրառվող չափանիշները, որոնք պետք է հնարավորինս օբյեկտիվ ու թափանցիկ լինեն և թույլ տան իրականացնել ինչպես քանակական, այնպես էլ որակական գնահատում: Կարևոր դերակատարում ունի գնահատում իրականացնող մարմինը, որը դատախազության համակարգի ինքնակառավարման կամ ներսում գործող հնարավորինս անկախ մարմին պետք է լինի, ինչպես նաև անհրաժեշտ է երաշխավորել գնահատման արդյունքների բողոքարկման հնարավորությունը: Տարբեր երկրներում այս առնչությամբ ներդրված են տարբեր համակարգեր, առանձին երկրներ դեռևս գտնվում են գործող համակարգերի կատարելագործման փուլում:

Ինչպես արդեն ներկայացվեց, Հայաստանի Հանրապետությունում դատախազների գնահատումը իրականացվում է ատեստավորման շրջանակներում, որտեղ կարևոր դեր ունի վերադաս դատախազի ներկայացվող գնահատագիրը: Չնայած վերջինս, ըստ կարգավորումների, պարունակում է կարևոր տվյալներ, սակայն գնահատման ենթակա չափանիշներ, որպես այդպիսին, սահմանված չեն: Ավելին, դասակարգված չեն քանակական և որակական բնույթի տեղեկատվության հավաքման մեթոդները, դրանց ամփոփումն ու օգտագործումը ատեստավորման գործընթացում: Քանի որ ատեստավորման արդյունքում կայացվող անհատական որոշումները չեն հրապարակվում, պարզ չէ, թե ինչ տեղեկատվության հիման վրա, ինչպիսի եզրակացություն է կազմվում Հանձնաժողովի կողմից, ինչքանով է այն հիմնավորված և այլն:

Խնդրահարույց են նաև օրենքով նախատեսված և վերը ներկայացված ատեստավորման ենթակա դատախազական պաշտոններից բացառությունները, որոնց մեջ մտնում են նաև ՀՀ գլխավոր դատախազը, վերջինիս տեղակալները և այլ բարձրաստիճան դատախազներ: Նման բացառությունը ողջամիտ հիմնավորում չունի, ավելին, բացառության մեջ նախատեսված սուբյեկտները պետք է ընդհանուր կարգով գնահատման ենթարկվեն՝ հաշվի առնելով զբաղեցրած պաշտոնի և պատասխանատվության կարևորությունը: Այս հարցին անդրադարձել է նաև ՏՀԶԿ-ն ՀՀ 5-րդ մոնիթորինգային զեկույցում:

Կարևոր է անդրադառնալ նաև ատեստավորումն իրականացնող մարմին: Ըստ ներպետական կարգավորումների այդ գործընթացում կարևոր դերակատարումը վերապահված է Որակավորման հանձնաժողովին, որը դատախազության համակարգի ինքնակառավարման մարմին չի համարվում: Ավելին, հաշվի առնելով վերջինիս կազմն ու անդամների ներգրավման ընթացակարգը, որին

կենտրոնական դերակատարում միանձնյա կարգով ունի Գլխավոր դատախազը, ապա վերջինս չի կարող համարվել նաև անկախ մարմին, որը ձևավորվում է օբյեկտիվ չափանիշների հիման վրա:

Ինչպես արդեն ներկայացվեց, Կարգը սահմանում է նաև ատեստավորման ժամանակ որոշում ընդունելու կարգը, համաձայն որի Հանձնաժողովը որոշումները կայացնում է բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված: Նման կարգավորման պարագայում անհասկանալի է, թե հավասար ձայների պարագայում ինչ որոշում և ինչպես է այն համարվում ընդունված:

Դրական կարելի է գնահատել ատեստավորման արդյունքների բողոքարկման հնարավորությունը, սակայն քանի որ պրակտիկայում դրա կիրարկման վերաբերյալ տվյալներ չկան, հնարավոր չէ գնահատել վերջինիս արդյունավետությունը: Առհասարակ, հրապարակային որոշումների բացակայության պայմաններում հնարավոր չէ գնահատել, թե պրակտիկայում ինչքանով է ատեստավորման գործընթացը ծառայում իր նպատակներին:

Այս առումով վերանայման և հստակեցման ենթակա են ինչպես գնահատագրի կազմման չափանիշները, այնպես էլ Որակավորման հանձնաժողովը՝ ձևավորման և կազմի առումով: Վերանայման ենթակա է նաև ատեստավորման արդյունքում կայացվող որոշումների հրապարակայնության հարցը, քանի որ ոչ այդ որոշումները, ոչ դրանց հիմքում դրված գնահատագրերի բովանդակային հատվածը հասանելի չեն:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Ստեղծել Դատախազության համակարգի ինքնակառավարման մարմին՝ Դատախազական խորհուրդ, և վերանայել Որակավորման հանձնաժողովի կազմն ու անդամների ընտրության կարգը՝ ի ապահովումն Գլխավոր դատախազից Որակավորման Հանձնաժողովի անկախության:
- ✓ Օրենսդրությամբ նախատեսել դատախազների գործունեության գնահատման մեխանիզմ, այդ թվում՝ քանակական և որակական հստակ ու օբյեկտիվ չափանիշներ, գնահատման սանդղակներ և գործունեության գնահատման արդյունքում հիմնավորված որոշում կայացնելու պահանջ:
- ✓ Մշակել դատախազի գործունեության գնահատման չափանիշների հիման վրա տեղեկությունների հավաքման մեթոդաբանություն՝ բացառելու գնահատման (ատեստավորման) ենթակա դատախազի վերադաս դատախազի որոշում կայացնելու հայեցողական լիազորությունը:
- ✓ Վերացնել գնահատման /ատեստավորման/ ենթակա դատախազների բացառությունները՝ նախատեսելով, որ բոլոր դատախազները, այդ թվում՝ Գլխավոր դատախազի գործունեությունը, ենթակա է գնահատման անկախության չափանիշներին համապատասխանող ինքնակառավարման մարմնի կողմից:
- ✓ Օրենսդրությամբ երաշխավորել դատախազների գնահատման (ատեստավորման) արդյունքում կայացված որոշումների հրապարակայնությունը և բողոքարկման հնարավորությունը անկախ ինքնակառավարման մարմնի առջև: